

ԱՐՏԱԿԱՐԳ ՄԱՐԴԻԿ՝ ԱՐՏԱԿԱՐԳ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒ ՄԷՁ EXTRAORDINARY PEOPLE IN EXTRAORDINARY TIMES

Միբելի ծխականներ եւ բարեկամներ
Ազգային Առաջնորդարանի,


Իբրեւ դերակատար ու վկայ այն փորձանաւոր ժամանակներուն, որոնց ընդմեջէն կ'անցնինք, ինչպէս եւ ամբողջ աշխարհը, բոլորիդ հետ կը բաժնեն այն սուգը, գոր ձեզմէ շատեր կը կրեն համավարակին կորսուած կեանքերուն համար, եւ այն դժուարութիւնները, գորս շատեր կը դիմագրաւեն: Մեր նորագոյն պատմութեան ողբերգական էջերը թոյլ կու տան ըսել, թէ աւելի վարժ ենք ցաւին դիմանալու, քան ուրիշներ: Սակայն, ճիշդ է նաեւ, որ բոլորս դէմ յանդիման կը գտնուինք անսախընթաց վիճակի մը, որուն ելլը միայն գուշակութիւններու նիւթ կրնայ ըլլալ:

Միաժամանակ, ուրախ եմ տեսնելով երախտապարտութեան ու գնահատանքի այն նամակներն ու արտայայտութիւնները, որոնք Ազգային Առաջնորդարանը ամէն օր կը ստանայ: Այս դժուարին օրերուն, բազմաթիւ հաւատացեալներու ցոյց տուած զօրակցութիւնը խիստ քաջալերական է, որովհետեւ կը նշանակէ, թէ մարտահրաւերը դիմագրաւած ենք՝ ըստ հարկի:

Մտածելու բան է, որ մեր ամբողջ գործունէութիւնը (Ս. Պատարագ, դպրոցներ, «Միամանթօ» լսարան, Salt & Light, Ս. Գիրքի սերտողութիւն, «Ս. Գրիգոր Տաթեւացի» ամառնային ծրագիր) առցանց հարթակներու փոխադրեցինք կարճ ժամանակամիջոցի մը մէջ: Ինչպէս գիտեն բոլոր անոնք, որոնք այժմ հեռակայ կաշխատին, նման բան ըսելը աւելի դիւրին է, քան կատարելը: Արհեստագիտական գործիքներով օժտուած ըլլալ չի նշանակեր լաւ կառավարելու ընդունակութիւնը ունենալ: Այսուհանդերձ, տուեալ փորձառութիւնը ունենալով կամ ոչ, մեր հոգեւորականներն ու անձնակազմը շարժեցան ժամանակի լրջութեան համապատասխան, յաճախ աշխատելով շատ աւելի երկար, քան պսակաձէ տահրէն առաջ: Եկեղեցոյ եւ ժողովուրդի առանձնայատուկ գործակցութիւնը, որ մեր ազգի հիմնասիւններէն մէկն է, անգամ մը եւս արդիւնաւորուեցաւ: Մեր հովիւները, ներառեալ անոնք, որոնք իրենց ծուխերէն շատ հեռու են, հաւատացեալներուն հասան «Առօրեայ խորհրդածութիւններ»ով, Քրիստոսի խօսքը բոլորիս հաղորդելով անհրաժեշտութեան այս պահուն: Կը բաւէ կարդալ մեր շաբաթական "Crossroads" լրատուն, որպէսզի նկատէք կատարուած աշխատանքին տարողութիւնը:

Մեր ջանքերուն բազմապատկումին զուգահեռ, մեր կարիքներն ալ նոյնքան մեծցած են: Ձեր աջակցութիւնը հարկաւոր է՝ աւելի քան երբեք: Ձեր առատաձեռն օժանդակութիւնը կը խնդրենք, «յիշելով այն խօսքը, որ Տէր Յիսուս ինք ըսաւ, թէ՝ «Աւելի լաւ է տալը, քան առնելը» (Գործք 20.35):

Միասնական ջանքերով կատարուած մեծ իրագործումները պէտք ունին ձեր օգնութեան, որպէսզի մսայուն դառնան եւ մեր գործը շարունակենք առաւել թափով եւ ուժով:

Աղօթարար՝

ԱՆՈՒՇԱՒԱՆ ԱՐՔԵՂԻՄԿՈՂՈՍ
Առաջնորդ

Dear parishioners and friends of the Armenian Prelacy,

As actors and witnesses of the trying times the country and, indeed, the entire world is going through, I share with you the grief many of us are feeling for the lives lost to the pandemic and the hardships many are facing. Given our recent tragic history, the threshold of pain for Armenians may be higher than for most people yet it is also true that we are all facing an unprecedented situation, the outcome of which is still anybody's guess.

At the same time, I rejoice in seeing the letters and expressions of gratitude and appreciation we are receiving every day at the Prelacy. In these difficult days, I find encouragement in the support so many of our faithful are communicating to us, because it means we rose up to the challenge.

Come to think of it; we switched every activity—Divine Liturgy, schools, the Siamanto Academy, Salt & Light, Bible Study, the Datev Summer Program—to online platforms almost overnight. As all of you know who now have to work remotely, it is easier said than done. Just having the technological tools doesn't mean being able to manage it well. Yet, trained or not, our clergy and our staff responded, often putting in many more hours of hard work than they did in pre-Covid times. Once again, the unique cooperation of church and society which is built into the very foundation of the Armenian nation paid off. And our Pastors have been reaching out to our faithful, even those very far from their parishes, with their "Daily Reflections," conveying the word of Christ to all of us in this hour of need. You just need to go over our weekly "Crossroads" newsletter to appreciate the scope of the work we are carrying out.

As we have redoubled our efforts, so have grown our needs. More than ever in our living memory, we need your support. Please give as generously as you can, "remembering the words of the Lord Jesus, for he himself said, 'It is more blessed to give than to receive.'" (Acts 20:35)

Please help us keep alive the huge achievements we have attained with our joint efforts. We will emerge stronger with the hand you lend us.

Prayerfully,

ARCHBISHOP ANOUSHAVAN
Prelate